

123

Thyruvayal

Saravali

3 K 13

U-65





Ֆ. ԵՆԳԵԼՍ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՊԿԻ ՄԱՐԴԱՑՄԱՆ ՄԵԶ

ԿՈՒՆՉՐԱՅ  
ՅԵՐՎԱՆ 1983

3016  
5-55



17 APR 2013

57

12 MAY 2005

Ֆ.ԵՆԳԵԼՍ

14 NOV 2009

ՅԿԼԸ

Է-65

պր

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՊԿԻ ՄԱՐԴԱՑՄԱՆ ՄԵԶ

37

303-

37



ԿՈՒՍՇՐԱՏ  
ԵՆՐՈՎԱՆ - 1983

353

37

3045 | ԷՆԳԵԼՍ

Է-65 | ԱՇԽԱՏԱՆՔԻ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՊԿԻ ՄԱՐԴԱՑՄԱՆ ՄԵԶ

Տ.Լ-Կ 22/4/39

764 21/12/7

1183 5/1/39

1162 - 24/1/39

018/III 37p  
0251 29/1/39  
224



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԱԿԱՆ ԿՈՆԿՐԵՏԻ  
ՎԵՐԱՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ ԿՈՆԿՐԵՏԻ



Գերաներենից բարգձանել է Ա. Առաքելյան  
Գերաներենի հետ համեմատել է Հ. Հարությունյան  
Տեխ. խմբագիր Մ. Նիքիկ  
Սրբագրիչ՝ Ա. Տեր-Մկրտչյան  
Հանձնված է արտադրության 16 փետրվարի 1933 թ.  
Ստորագրված է տպագրելու 23 փետրվարի 1933 թ.  
Տիրում 6000 \* Հրատ № 83. 44.000 տպ. նշ.

Պետհրատի տպարան, Պատվեր № 434, Գլավիկո 7716 (բ)



ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՅՑՈՒՆԸ  
ԿԱՊԿԻ ՄԱՐԴԱՑՄԱՆ ՄԵՋ\*)

Աշխատանքն ամեն հարստութեան աղբյուրն է, —ասում են քաղաքատնտեսները: Նա այդպիսին է՝ առընթեր բնութեան, վորը նրան նյութ է մատակարարում, իսկ աշխատանքն այդ նյութը դարձնում է հարստութուն: Բայց աշխատանքն անսահման ափելին է, քան այդ: Նա մարդկային կյանքի առաջին հիմնական պայմանն է և այն ել այն աստիճան, վոր մենք վորոշ իմաստով պիտի ստենք. —նա յե հենց մարդուն ստեղծել:

Հարյուր—հազարավոր տարիներ առաջ, յերկրագնդի այն դարաշրջանում, վոր տակավին յենթակա չե ստույգ վորոշման և վորին յերկրաբաններն անվանում են յերրորդական շրջան, յենթադրաբար դրա վերջին, ինչ—վոր տաք դոտում, հավանորեն մի մեծ՝ այժմյան Հնդկական ովկիանոսի հատակը սուզված մայր ցամաքի վրա ապրում եր առանձնապես բարձր զարգացման հասած մարդանման կապիկների մի ցեղ: Դարվինը տվել է մեզ մեր այս նախնիքների մոտավոր նկարագրութունը: Նրանք ամբողջովին ծածկված են յեղել մազերով, ունեցել են մորուք ու սրածայր տականներ և ապրել են խմբերով ծառերի վրա:

Սկզբում՝ իրենց կենսաձևի հետևանքով, վորը մագլցելու ժամանակ ձեռներին այլ աշխատանք է հատկացնում քան վոտներին, — այդ կապիկները վարժվում են հարթ գետնի վրա քայլելիս ձեռների ոգնութեանն այլևս չդիմել և հետզհետե ավելի ուղիղ քայլվածք ընդունել: Դրանով կապիկց մարդուն անցնելու վիճական քայլն արվեց:

Այժմ ապրող բոլոր մարդանման կապիկներն ել կարող են կանգնել ուղիղ և միայն յերկու վոտների վրա առաջ շարժվել, — բայց միայն կարիքի դեպքում և շատ անճարակ կերպով: Նրանց

\*) Անավարտ մի հոդված՝ Մուգելսի «Բնութեան դիալեկտիկա» աշխատութունից:



ընտանիքի քայլվածքը կատարվում է կիսով չափ ուղիղ դրուժյամբ և ձեռքերի դորձակցությամբ: Մեծ մասը բուռնացել կոճերը հենում է գետնի վրա և վոտները ներս քաշած՝ մարինը ճոճում յերկար ձեռքերի արանքից, ինչպես հաշմանդամը, վոր շարժվում է անթացուպի ոգնությամբ: Ընդհանրապես, կարող ենք այժմ ել դիտել կապիկների մոտ չորս վոտանի քայլվածքից մինչև յերկու վոտանի քայլվածքին անցնելու բոլոր աստիճանները: Սակայն յերկու վոտանի քայլվածքը կապիկներից և վոչ մեկի մոտ ավելին չէ, քան կարիքի ստիպմունք:

Յեթե ուղիղ քայլվածքը մեր թավամալ նախնիքների մոտ սկզբում կանոն, իսկ ժամանակի ընթացքում անհրաժեշտություն պիտի դառնար, ապա դա կանխադրում է, վոր ձեռքերն այդ միջոցին հետզհետե պիտի վարժվելին այլ աշխատանքներ կատարելու: Արդեն կապիկների մոտ ել կա ձեռքի և վոտքի դորձանության վորոչ տարբերություն: Ձեռքը, ինչպես արդեն հիշեցինք, մազլցելու ժամանակ այլ դորձանություն ունի, քան վոտքը՝ ձեռքն առավելապես ծառայում է կերակուր հավաքելու ու բռնելու համար, ինչպես այդ անում են մի քանի ստորին կաթնասուններ իրենց առջևի թաթերով: Մի քանի կապիկներ ձեռքերով բույն են շինում ծառերի վրա կամ նույնիսկ, ինչպես Շիմպանզեն, ծածկ՝ վատ յեղանակներին ճյուղերի մեջ պաշտպանվելու համար: Ձեռքերով են փայտ բռնում թշնամուց պաշտպանվելու համար կամ նրան ուժակոծում պտուղներով ու քարերով: Ձեռքերով են գերության մեջ մի շարք պարզ՝ մարդկանց նմանեցրած գործողություններ կատարում: Բայց հենց այստեղ է յերևան գալիս, թե վորքան մեծ է տարբերությունը մարդանման կապիկ անպարզացած ձեռքի ու մարդու՝ հարյուր-հազարավոր տարիների ընթացքում աշխատանքի միջոցով բարձր կատարելության հասած ձեռքի միջև: Վոսկորների ու մկանների թիվն ու ընդհանուր դասավորությունը յերկուսի մոտ ել նույնն են. սակայն ամենաստորին վայրենու ձեռքն անգամ ընդունակ է կատարելու հարյուրավոր աշխատանքներ, վորի նմանը վոչ մի կապիկ ձեռք կատարել չի կարող: Վոչ մի կապիկ ձեռք յերբեք չի պատրաստել թևկուղ ամենակոպիտ քարե դանակը:

Մեր նախնիքները, վորոնք կապիկից մարդ դառնալիս հազարավորակները ընթացքում հետզհետե իրենց ձեռքերը հարմարեցրել

են վորոչ գործառնությունների, նույնիսկ այնպիսիները, վորոնց մոտ մարմնական վերասերման հետ միասին կարող է վերադարձ տեղի ունեցած լինել դեպի կենդանական դրուժյունը, — շատ ավելի բարձր են, քան այն միջանցիկ եյակները:

Մինչև վոր կայծքարը մարդու ձեռքով վերամշակվեց դանակի, այնպիսի մեծ ժամանակամիջոց պիտի անցած լինի, վորի համեմատությամբ մեղ ծանոթ պատմական ժամանակամիջոցը աննշան կթվա: Սակայն վճռական քայլն արդեն արված էր. — ձեռքն ազատված էր և կարող էր նորանոր հմտություններ ձեռք բերել. իսկ այդպիսով ձեռք բերած ձկուռնությունը ժառանգվեց սերնդից սերունդ և ամեց:

Այսպիսով ձեռքը սոսկ աշխատանքի որդանը չէ, այլ նաև նրա արդյունքը: Միայն աշխատանքի շնորհիվ, նոր գործառնություններին համարվելու շնորհիվ մկանների հողերի և՛ յերկարատև ժամանակամիջոցում՝ նաև վոսկորների հատուկ զարգացման շնորհիվ, վոր ձեռք է բերվել նոր գործառնություններին հարմարվելով և ժառանգությամբ անցել է սերնդից սերունդ, և այդ ժառանգված կատարելագործությունը նորանոր ավելի բարդ գործառնության մեջ կիրառելու շնորհիվ է, վոր մարդու ձեռքը կատարելության այն աստիճանին է հասել, վոր կարող էր հրաշագործել Ռաֆայելի նկարները, Թորվալդսենի արձանները, Պադանինու յերաժշտությունը:

Սակայն ձեռքը միայնակ չէր: Նա կազմում էր ամբողջական, չափազանց բարդ որդանիվ մի անդամը միայն: Յեվ այն, ինչ արվում էր ի շահ նրա, արվում էր նույնպես ի շահ ամբողջ մարմնի, վորին նա սպասավորում էր՝ այն ել յերկու կերպ:

Նախ՝ այն որենքի հետևանքով, վոր Դարվինն անվանում է ամման աղերսակցության (Korrelation) որենք: Այս որենքի համաձայն որդանական եյակի առանձին մասերի վորոչ ձևերը մշտապես կապված են այլ մասերի վորոչ ձևերի հետ, վորոնք առերևույթս վոչ մի անջություն չունեն նրանց հետ: Այսպես՝ բոլոր կենդանիները, վորոնք ունեն արյան կարմիր բջիջներ, առանց բջջակորիզի և վորոնց ծոծրակը միացած է առաջին վորդնի հետ հողերով, — առանց բացառության ունեն նաև կաթնային գեղձեր՝ ձագերին կերակրելու համար: Այսպես, կաթնասուն կենդանիների կճղակներն առհասարակ կապված են վորոճալու համար բարդ



տաճոքս ունենալու հետ : Վորոչ ձեերի փոփոխութիւններն առաջ  
են բերում մարմնի այլ մասերի ձեափոխութիւն, թեև մենք տա-  
կալին անկարող ենք պարզաբանել այդ կապակցութիւնը : Բոլոր-  
ովին սպիտակ դույնի և կապույտ աչքերով կատունները մշտապես  
կամ գրեթե մշտապես լինում են խուլ : Մարդկային ձեռքի աստի-  
ճանական կատարելագործումը և, նրան համընթաց, վոտքի զար-  
գացումն ուղղահայաց քայլվածքի համար՝ անտարակույս ունեցել  
է իր ազդեցութիւնը որդանիզմի այլ մասերի վրա շնորհիվ աղեր-  
սակցութեան որեւէրի : Սակայն այս ազդեցութիւնը դեռ շատ քիչ  
է ուսումնասիրված և մենք այստեղ, փաստորեն արձանագրելուց  
զատ, այլ բան անել չենք կարող :

Շատ ավելի կարևոր է ձեռքի զարգացման ուղղակի, նկատե-  
լի ներգործութիւնը մնացած որդանիզմի վրա : Ինչպես արդեն  
ասացինք, մեր կապիկ նախահայրերը յեղել են հասարակական  
կենդանիներ : Ակներեւարար անհնար է, վոր մարդը, բոլոր կենդա-  
նիների մեջ ամենահասարակականը, առաջանար վոչ հասարակա-  
կան մերձավոր նախահայրերից : Ձեռքի զարգացմամբ, աշխա-  
տանքով սկսվող տիրապետութիւնը բնութեան վրա յուրաքանչ-  
յուր քայլափոխում ընդարձակեց մարդու հայեցողաչառը : Բնու-  
թեան իրերի մեջ նա շարունակարար հայտարերեց նոր, մինչ այդ  
անձանոթ հատկութիւններ : Մյուս կողմից աշխատանքի զարգա-  
ցումն անհրաժեշտաբար նպաստեց հասարակութեան անդամներին  
ավելի սերտորեն կապվելու իրար հետ, վորով հաճախակի դար-  
ձան փոխադարձ աջակցութեան, համագործակցութեան դեպքերը,  
և այս համագործակցութեան ոգտակարութեան զխտակցութիւնը  
յուրաքանչյուրի համար պարզ դարձավ : Կարճ ասած՝ զարգաց-  
ման յենթակա մարդիկ հասան այն կետին, վոր կարիք գգացին  
մի բան անելու իրար : Պահանջն ստեղծեց իր որդանը.—կապիկ  
անզարգացած խոչափողը դանդաղ, սակայն հաստատուն կերպով  
փոխակերպվեց միշտ աճող մոդուլացիայի շնորհիվ, և բերանի որ-  
դանները հեռոջետե փարթվեցին վանկատվող հնչյուններն իրար  
յետեից արտաբերել :

Վոր աշխատանքի հետ ու աշխատանքի միջոցով լեզվի ծագ-  
ման այս մեկնաբանութիւնը միակ ճշմարիտն է, ապացուցում է  
համեմատութիւնը կենդանիների հետ : Այն քիչ բանը, վոր այս  
վերջիններն, անկամ նրանց մեջ ամենից զարգացածներն, ունին

իրար հազորդելու, կարող են հազորդել նաև առանց վանկատվող  
խոսքի : Բնական վիճակում վոչ մի կենդանի չի զգում խոսելու  
կամ մարդկային լեզուն հասկանալու պակասը : Բոլորովին այլ է,  
յերբ նա ընտելացված է մարդու կողմից : Շունը և ձին, մարդու  
հետ չիմկելով՝ ձեռք են բերել այնպիսի զգայուն լսողութիւն վան-  
կական հնչյունի համար, վոր նրանք սովորել են դուրբութեամբ  
ըմբռնել ամեն խոսք, վորքան այդ թուլյատրում է նրանց սխա-  
կերացումների շրջանակը : Նրանք բացի այդ ձեռք են բերել ունա-  
կութիւն այնպիսի զգացութիւնների, ինչպես՝ անձնվիրութիւն  
դեպի մարդիկ, յերախտագիտութիւն և այլն, վոր առաջներում  
նրանց խորթ են յեղել : Ով այդպիսի կենդանիների հետ շատ է  
չփում ունեցել, բավականաչափ համոզված կլինի, վոր նրանք  
այժմ հաճախ խոսել չկարողանան իրրե պակաս են զգում : Սակայն  
զժբախտաբար նրանց ձայնական որդաններն այնքան են հատուկ  
ուղղութեամբ զարգացել, վոր վոչինչ անել չի կարելի : Վորտեղ  
սակայն այս որդանը գոյութիւն ունի, այնտեղ այս անկարողու-  
թիւնը վորոչ չափով նվազում է : Թռչունի բերանի որդաններն  
անշուշտ անհամեմատ տարբեր են մարդկային բերանի որդաննե-  
րից, բայց և այնպես թռչունները միակ կենդանիներն են, վոր  
սովորում են խոսել. և ամենագարշելի ձայն ունեցող թռչունը՝  
թռթակը խոսում է ամենից լավ : Թող չասեն, թե նա չի ըմբռ-  
նում իր ասածը : Անշուշտ, նա խոսելու, ինչպես և մարդկանց  
ընկերութեան հաճույքից ժամերով կարող է անմտորեն կրկնել  
իր ամբողջ բառապաշարը : Սակայն վորքան թուլյատրում է նրան  
նրա պատկերացման շրջանակը, այնքան նա կարող է նաև սովորել  
ըմբռնելու այն, ինչ ասում է նա : Սովորեցրեք թռթակին հայ-  
հոյական բառեր՝ այնպես, վոր նա զազափար կազմեր նրանց նշա-  
նակութեան մասին (տաք յերկրներից վերադարձող նավաստիների  
ամենասիրելի զվարճութիւններից մեկը), այնուհետև զրգուցեք  
նրան, և դուք կտեսնեք, վոր նա իր հայհոյական բառերը կզոր-  
ծածի նույնքան տեղին, վորքան Բերլինի բանջարավաճառ կինը :  
Նույնն է նաև քաղցրեղեն մուրալիս :

Նախ՝ աշխատանքը, ապա՝ դրանից հետո ու դրա հետ միա-  
ժամանակ՝ լեզուն—սրանք են այն յերկու գլխավոր խթանները,  
վորոնց ազդեցութեան ներքո կապիկների ուղեղը հեռոջետե կա-  
րող էր փոխվել մարդկային ուղեղի, վոր իր նմանութեամբ հան-



դերձ դերազանց և առաջինց մեծությամբ ու կատարելությամբ :  
Ուղեղի զարգացման համընթաց , սակայն , տեղի չե ունեցել նրա  
մերձակա գործիքի՝ զգայության որգանների զարգացումը : Ինչ-  
պես վոր լեզվի աստիճանական զարգացմանն անհրաժեշտորեն  
ընթացակցում է լսողության որգանի համապատասխան նրբա-  
ցումը , այնպես էլ ուղեղի զարգացմանն ընթացակցում է ընդհան-  
րապես բոլոր զգայարանների կատարելագործությունը : Արծիվը  
տեսնում է ավելի հեռուն , քան մարդը , սակայն մարդու աչքը տես-  
նում է առարկաների մեջ շատ ավելի բան , քան արծիվը : Ծոռն  
ունի ավելի նուրբ հոտառություն , քան մարդը . սակայն նա իվի-  
ճակի չէ տարբերելու այն բոլոր հոտերի մի հարյուրերորդական  
մասը , վորոնք մարդու համար հանդիսանում են դանազան առար-  
կաների վորոշ հատկանիշներ : Ծոռափելիքի զգայարանն էլ , վոր  
կապիկ մոտ գոյություն ունի անդարգացած և կուպիտ ձևով , դար-  
գացել է մարդու ձեռքի հետ միասին՝ աշխատանքի շնորհիվ : Ու-  
ղեղի և նրան յենթակա զգայարանների , հետզհետե ավելի պայ-  
ժառացող զիտակցության , արստրակցիտայի ու յեղրակացության  
ունակության զարգացման փոխադրեցությունն աշխատանքի ու  
լեզվի վրա յերկուսի համար էլ հետագա զարգացման նոր ազդակ-  
հանդիսացավ : Այդ զարգացումը կանգ չառավ՝ հենց վոր մարդը  
վերջնականորեն բաժանվեց կապիկից , այլ տարբեր ժողովուրդների  
մեջ և տարբեր ժամանակներում տարբեր աստիճանի և  
տարբեր ուղղությամբ , յերբեմն ընդհատվելով ժամանակային  
և տեղական հետադարձ շարժումով ,— ընդհանուր առմամբ ուժեղ  
թափով առաջ է ընթացել : Այդ զարգացումը մի կողմից առաջ է  
մղվել , մյուս կողմից վորոշ ուղղությամբ թեքվել պատրաստի  
մարդու հետ հանդես յեկող ծնունդ առած մի նոր տարրի՝ հասա-  
րակության կողմից :

Հարյուր-հազարավոր տարիներ են անցել \*) անշուշտ ,— դա  
յերկրագնդի պատմության մեջ ավելին չէ , քան մի վայրկյանը  
մարդու կյանքում ,— մինչև վոր ծառերի վրա մադցող կապիկների  
խմբից ծնունդ է առել մարդկային հասարակությունը : Սակայն

\*) Այս ասպարիզում առաջին կարգի հեղինակությունն Վ. Թոմսոնը հաշ-  
վարկել է , վոր հավանորեն հարյուր միլիոնավոր տարուց մի քիչ ավելի չե անցել  
այն որից , յերբ յերկրեն այն աստիճանի չե սառել , վոր նրա վրա բույսեր և  
կենդանիներ կարող էին ապրել :

վերջապես հանդես յեկավ այն : Յեվ ի՞նչն է դարձյալ բնորոշ  
տարբերությունը մարդկային հասարակության ու կապիկների  
խմբի միջև : Աշխատանքը : Կապիկների խումբը բավականանում էր  
նրանով , վոր նա արածելով սպառում էր պատրաստի կերի այն  
չըջանը , վոր նրան էր մնում աշխարհագրական դիրքի կամ հա-  
րևան խմբերի դիմադրության շնորհիվ : Նա դեգերում էր և պայ-  
քար մղում կերի նոր վայրեր ձեռք բերելու համար . սակայն նա  
անընդունակ էր այդ վայրից ավելին ստանալու , քան այն , ինչ  
նրան պատրաստի տալիս էր բնությունը , յեթե հաշվի չառնենք  
այն , վոր նա իր կղզիանքով հողն անգիտակցաբար պարարտաց-  
նում էր : Հենց վոր կերով հարուստ բոլոր շրջանները գրավվեցին ,  
կապիկների ազդարնակչության աճումը պետք է կանգ առներ .  
յավաղույն դեպքում կենդանիների թիվը կարող էր նույնը մնալ :  
Սակայն բոլոր կենդանիներն էլ ծայր աստիճանի վատնում են  
սննդանյութերը , ինչպես և վոչնչացնում են սննդի աճումն իր  
սաղմի մեջ : Գայլը խնայողաբար չի վերաբերվում այժեմնիկին ,  
վորը գայլից տարի նրան պետք է ուտելիք տա , ինչպես այդ ա-  
նում է վորսորդը : Հունաստանում այժեքը խժոռում է յին թփուտ-  
ները՝ չթողնելով , վոր նրանք աճեն , և դրա հետևանքով յերկրի  
բոլոր սարերը լերկացան : Կենդանիների այս «յերուզակային տըն-  
տեսությունը» կարևոր դեր է կատարել տեսակների աստիճանա-  
կան փոփոխության մեջ նրանով , վոր նա կենդանիներին ստիպում  
է հարմարվել անսովոր կերակրի : Դրա հետևանքով նրանց արյու-  
նը քիմիական այլ բաղադրություն է ստանում , և ամբողջ մարմ-  
նակազմը հետզհետե փոխվում է , իսկ յերբեմնի հաստատուն  
տեսակները մեռնում են : Վոչ մի տարակույս չկա , վոր այդ  
յերուզակային տնտեսությունը խոշոր չափով նպաստել է մեր  
նախնիքների մարդացման գործին : Դրա հետևանքով կապիկների  
այն ցեղը , վոր խելքով ու հարմարվելու ունակությամբ առաջ էր  
գնացել , սննդաբույսերի շրջանն ընդարձակեց , այդ բույսերից  
ավելի շատ ուտելի մասեր գործածեց վորպես սնունդ . կարճ՝  
սնունդը շարունակ ավելի բազմազան դարձավ և , դրա հետ միա-  
սին , մարմնի մեջ զնացող նյութը մարդացման քիմիական նախա-  
պայմանը հանդիսացավ :

Սակայն այս բոլորը դեռևս իսկական աշխատանքը չէ : Աշ-  
խատանքն սկսվում է գործիք պատրաստելու հետ միասին : Իսկ



ի՞նչ են ներկայացնում մեր գտած հնագույն գործիքները, վորոնց մասին մենք կարող ենք դատել նախադատմական մարդկանցից ժառանգութուն մնացած իրերի և հնագույն պատմական շրջանի ժողովուրդների, ինչպես և արդի ամենաբերրա վայրենիներին կենցաղաձևի հիման վրա: Դրանք վորսորդական ու ձկնորսական գործիքներ են, առաջինները՝ միաժամանակ և զենքեր: Մական վորսորդութունն ու ձկնորսութունը կանխադրում են անցման մի շրջան, յերբ բուսակերության հետ միասին կա նաև մսակերութուն: Իսկ դա մի նոր կարևոր քայլ է զեպի մարդացումը: Մտեղեկ անուղղ պարունակում է իր մեջ, գրեթե պատրաստի դրությամբ, այն կարևոր նյութերը, վորոնց կարիքն ունի մարմինը նյութափոխության համար: Նա կրճատում է մարսողության հետ նաև բույսի կյանքին հատուկ բուսական այլ գործողութուններին տեղությունը մարմնի մեջ և դրանով ավելի ժամանակ վաստակում, ավելի նյութ ու ավելի հաճույք՝ բուն կենդանական (անիմալ) կյանքի գործառնության համար: Յեվ վորքան ձևակերպվող մարդը բուսական աշխարհից հեռանում է, այնքան նա բարձրանում է կենդանուց: Ինչպես վոր վայրենի կատուններն ու շները մսակերության հետ միասին բուսակերության ընտելանալով մարդուն սպասավոր դարձան, այնպես էլ բուսականության առնթեր, մսակերության ընտելանալը նպաստեց մարդու մարմնական ուժեղացման և ինքնուրույն դառնալուն: Մտեղեն սննդի ներգործութունն ամենից շատ ազդեց ուղեղի վրա, վորը շատ ավելի նյութեր ստացավ իր սնման ու դարդացման համար, և վորը դրա շնորհիվ սերնդից սերունդ արագ կատարելագործվեց ու դարգացավ: Թող մեզ ներեն պարոնայք խոտաճարակները, յեթե ասենք, վոր մարդը չէր կարող զարգացման հասնել առանց մսակերության. և յեթե մեզ ծանոթ բոլոր ժողովուրդների մոտ մսակերությունը յերբեմն մարդակերության է հասել (բերլինցիների նախնիքը՝ վելատարները կամ վելցերը գեո 10-րդ դարում ուտում էին իրենց ծնողներին), դա այժմ մեր գործը չէ:

Մսակերության հետևանքն յեղավ յերկու վճռական նշանակութուն ունեցող առաջադիմութուն, — կրակի ոգատագործումը և կենդանիների ընտելացումը: Առաջինն էլ ավելի կրճատեց մարսողության պրոցեսը, վորովհետև նա կերակուրը բերանը տարավ՝ այսպես ասած՝ արդեն կիսամարս դրությամբ: Յերկրորդը ճոխաց-

րեց մսակերությունը նրանով, վոր վորսորդության հետ միասին հայտարերեց մի նոր մշտապես ոգատագործելի սննդադրյուրյայի այդ՝ նրան մատակարարեց կաթ ու կաթնամթերք, վոր նոր՝ իր նյութերի բաղադրությամբ մսին առնվազն համարժեք՝ կերակրանութ է: Այսպիսով, այս յերկուսն ուղղակի դարձան մարդու համար ազատագրման մի նոր միջոց: Իսկ կանգ առնել նրանց անուղղակի հետևանքների վրա, վորքան էլ բարձր արժեք ունենային դրանք մարդու և հասարակության զարգացման համար, դա շատ հեռու կտաներ մեզ:

Ինչպես մարդն ընտելացավ ուտել այն ամենն, ինչ կարելի չէ ուտել, այդպես էլ նա ընտելացավ ապրել ամեն տեսակի կլիմայում: Նա տարածվեց բովանդակ ընակելի յերկրների վրա, նա՝ միակ կենդանին, վոր ինքն իր մեջ ունի ուժի կատարելությունն այդ բանի համար: Մյուս կենդանիները, վորոնք ընտելացել են բոլոր տեսակի կլիմաներին, այդ սովորել են վոչ թե ինքնիրեն, այլ հետևելով մարդուն (ընտանի կենդանիներն ու միջատները): Սկզբնական հայրենիքի միտրինակ տաք կլիմայից տեղափոխվելն ավելի ցուրտ յերկրներ, վորտեղ տարին բաժանվում է ամառվա ու ձմեռվա, — ստեղծեց նոր կարիք, կարիք՝ ունենալու բնակարան ու հագուստ ցրտի ու խոնավության դեմ պաշտպանվելու համար. դա բաց արավ աշխատանքի նոր հորիզոններ և դրան զուգընթաց՝ գործունեյության նորանոր ձևեր, վորոնք մարդուն հետզհետե ավելի հեռացրին կենդանուց:

Շնորհիվ ձեռքի, խոսելու գործարանի և ուղեղի համադրածակցության — վոչ միայն առանձին անհատի մոտ, այլև հասարակության մեջ — մարդիկ ունակ դարձան ավելի բարդ գործողություններ կատարելու, ավելի բարձր նպատակների ձգտելու և հասնելու: Աշխատանքը սերունդից սերունդ դարձավ ավելի բազմազան, կատարյալ ու բազմակողմանի: Վորսորդությանն ու անասնապահությանը հետևել է յերկրագործությունը, սրան՝ մանկը և հյուսելը, մետաղի մշակությունը, կավագործությունը, նավարկությունը: Առևտրի և արհեստի կողքին, վերջապես, հրապարակ են դալիս արվեստն ու գիտությունը. ցեղերից ծնվում են ազգերն ու պետությունները: Զարգանում են իրավունքն ու քաղաքականությունը և՛ դրան համընթաց՝ կրոնը, մարդկային իրականության այս ֆանտաստիկ կրկնապատկերը:



մարդու ուղեղում : Այս բոլորի հանդեպ, — վորոնք նախ և առաջ հանդիսանում էյին վորպէս ուղեղի արդշունք և վորոնք կարծես մարդկային հասարակութիւնները վրա իշխում էյին, — բանող ձեռքի համեստ արտադրութիւնները տեղի յեն տալիս, մանավանդ վոր աշխատանքային գործողութիւններ ծրագրող գլուխը զեն հասարակութիւնն զարգացման վաղեմի շրջանում (որինակ՝ արգեն նախնական ընտանիքում) կարող եր հարկադրել այլ ձեռքերին իրականացնելու իր ծրագրած աշխատանքը : Գլխին, ուղեղի դար-իրականացնելու իր ծրագրած աշխատանքը : Գլխին, ուղեղի դար-գացմանն ու գործունեութիւնն են վերադրվել արագ թափով ա-ստի որում են իրենց գործողութիւնները մեկնաբանել իրենց մտա-ծողութիւնը, փոխանակ բացատրելու իրենց կարիքներով, վո-րոնք, անշուշտ, անդրադառնում են դիտում, գիտակցվում են, և այսպիսով ժամանակի ընթացքում ծնունդ է առնում այն իդեա-լիստական աշխարհայեցողութիւնը, վորը՝ մանավանդ հին աշ-խարհի անկումից ի վեր՝ իշխում եր մտքերի վրա : Նա իշխում եր տակավին այն աստիճան, վոր Գարվինի դարոցի մատերիալիստ բնագետներն անկարող են պարզ պատկերացնել մարդու ծագու-մը, վորովհետև նրանք՝ այդ իդեոլոգիայի ազդեցութիւնն անբռ-չեն ճանաչում աշխատանքի կատարած դերը :

Կենդանիներն ել, ինչպէս արդեն նշել ենք, իրենց գործունե-յութեամբ փոխում են արտաքին բնութիւնը, թեև վոչ նույն չափով, ինչպէս մարդը և շրջապատի նկատմամբ արած նրանց փոփոխութիւնները, ինչպէս տեսանք, հետագայը ներգործու-թիւնն ունեն իրենց հեղինակների վրա : վորովհետև բնութիւն մեջ վոչ մի բան տեղի չի ունենում կղզիացած՝ ամեն մեկն ազդում է մյուսին և ընդհակառակը : Յեւ այս բազմակողմանի շարժման ու փոխազդեցութիւնն մոռացութիւնն մատնեն է մեծ մասամբ խանդարում մեր բնագետներին՝ հստակ պատկերացնելու ամե-նապարզ իրերը : Մենք տեսանք, թե ինչպէս այժերը խանդարում էյին Հունաստանում նորից անտառներ տնկել : Ս. Հեղինեյում առաջին դազթականութիւնն բերած այժերն ու խողերն արմատա-լսիլ արին կղզու ամբողջ նախկին բուսականութիւնը և այդպի-սով հող պատրաստեցին, վոր հետագա նավորդների ու դազթա-կանների բերած բույսերը տարածվեյին : Բայց յերբ կենդանիները տեսական ազդեցութիւնն են գործում իրենց շրջապատի վրա,

այդ տեղի յե ունենում առանց գիտավորութիւն, և պատահակա-նութիւնն է հենց այդ կենդանիների նկատմամբ : Սակայն վորքան հեռանում են մարդիկ կենդանիներից, այնքան նրանց ազդեցու-թիւնը կրում է կանխամտածված, ծրագրված, վորոչ նպատակի ուղղված գործողութիւնն բնույթ : Կենդանին վոչնչացնում է վոր-ևե յերկրի բուսականութիւնն առանց իրեն հաշիվ տալու, թե ինչ է անում նա : Մարդը վոչնչացնում է այն, վորպէսզի ազատ հողի վրա դաշտապտուղ ցանի, ծառեր ու խաղողի վորթ տնկի, վորոնցից նա կտանա—նա գիտե այդ—իր սերմածի բազմապա-տիկը : Նա ուղտակար բույսեր ու կենդանիներ է տեղափոխում մի յերկրից մյուսը և այդ յեղանակով փոփոխութիւնն է մտցնում ամ-բողջ յերկրամասերի կենդանական ու բուսական աշխարհի մեջ : Դեռ ավելին : Արհեստական բուսական շնորհիվ բույսերն ու կեն-դանիները այն աստիճանի յեն մարդու ձեռքում փոփոխութիւնն յենթարկվում, վոր դառնում են անճանաչելի : Դեռ մինչև այժմս ել չեն հատարելված այն վայրի բույսերը, վորոնցից առաջացել են մեր հացահատիկները : Թե ի՞նչ վայրի կենդանուց են սերվել մեր շները, վորոնք այնքան տարբեր են իրարից, կամ մեր ձիերի բազմազան ցեղերը, — մինչև այժմ ել վիճելի յե : **Մ**

Ինքնին հասկանալի յե, վոր մենք մտադրութիւնն չունենք բացատրելու ծրագրված, կանխամտածված գործողութիւնն ունա-կութիւնը կենդանիների մեջ : Ընդհակառակն : Պլանային գործո-ղութիւնն գոյութիւնն ունի սաղմնային ձևով ամենուրեք, վորտեղ պրոտոպլազման, կենդանի սպիտակուցը գոյութիւնն ունի և հա-կազում է, այսինքն կատարում է վորոչ պարզ շարժումներ՝ վոր-պէս հետևանք արտաքին վորոչ գրգռումների : Այդպիսի հակազդե-ցութիւնն տեղի ունի այնտեղ, վորտեղ դեռ բջիջ ել գոյութիւնն չունի, ել չենք խոսում նյարդային բջիջի մասին : Այն յեղանակը, վորով միջատակեր բույսերն իրենց ավարը վորսում են, վորոչ իմաստով նույնպէս պլանային է, թեպետև բոլորովին անգիտակ-ցական : Կենդանիների պլանային, գիտակցական գործունեյու-թիւնն ունակութիւնը զարգանում է նրանց նյարդային համակար-դութիւնն զարգացման համընթաց ու հասնում է իր բարձր աստի-ճանին կաթնասունների մոտ : Անդլիայում աղվես վորսալիս ամեն-որ կարելի յե դիտել, թե ինչպէ՛ս աղվեսը կիրառում է վայրերի իր ճանաչութիւնը՝ հետապնդողներից ազատվելու համար, և թե



ինչպես լավ ճանաչում և ոգտագործում է հողի առավելութունը՝  
իր հետքերը կորցնելու համար: Մարդու հետ հաղորդակցութուն  
ունենալու շնորհիվ բարձր զարգացման հասած մեր ընտանի կեն-  
դանինների մոտ ամեն ոք կարելի չէ նկատել նույն աստիճանի խո-  
րամանկության գեպքեր, ինչ յերեխաների մոտ: Ինչպես վոր  
մարդկային սաղմի զարգացման ընթացքը մոր արգանդում՝ մեր  
կենդանական նախորդների—սկսած վորդից—միլիոնավոր տարի-  
ների մարմնական զարգացման պատմության համառոտ կրկնու-  
թյունն է, ճիշտ այդպես էլ յերեխայի հոգեկան զարգացումը  
նույն նախորդների—համենայն դեպս ավելի ուշ շրջանի—մտավոր  
զարգացման էլ ավելի սեղմ կրկնությունն է: Սակայն բոլոր կեն-  
դանինների պլանային գործողություններն անկարող յեղան իրենց  
կամքի դրոշմը դնելու բնության վրա: Միայն մարդը կարողա-  
ցավ այդ անել:

Կարճ, կենդանին ոգտագործում է արտաքին բնությունը և  
նրա մեջ փոփոխությունն առաջ բերում պարզապես միայն իր ներ-  
կայությամբ: մինչդեռ մարդն իր փոփոխությունների շնորհիվ  
նրան դարձնում է սպասարկու իր նպատակների համար, տիրա-  
պետում է նրան: Յեվ այս հանդիսանում է մարդու վերջին, եյա-  
կան տարբերությունը մնացած կենդանիներից և դարձյալ աշխա-  
տանքն է, վոր այդ տարբերությունն առաջ է բերում:

Սակայն շատ չհրապուրվենք բնության վրա տարած մարդ-  
կային մեր հաղթանակներով: Ամեն մի այդպիսի հաղթանակի  
համար բնությունը վրեժառու յե լինում մեզնից: Ճիշտ է, այս  
հաղթանակներից ամեն մեկն ունի առաջին հերթին այն հետևանք-  
ները, վոր մենք ենք նկատի առել, սակայն յերկրորդ և յերրորդ  
հերթին միանգամայն այլ՝ չնախատեսված արդեցությունն է ունե-  
նում, վորը հաճախ վերացնում է առաջին հետևանքները: Այն  
մարդիկ, վորոնք Միջագետքում, Հունաստանում, Փոքր Ասիայում  
և այլուր մշակելի հող ձեռք բերելու նպատակով վոջնացրել են  
անտառները, —չեն յերազել, թե դրանով այդ յերկրների արդե  
ամայացման հիմքն են դրել, վորովհետև անտառների հետ միա-  
սին հողը զրկվել է խոնավությունն ամբարող և պահպանող կենտ-  
րոններից: Արդյան իտալացիները, յերբ կտրատում են հարավա-  
հայաց փշատերև անտառները, վոր այնքան խնամքով պահպան-  
վում են հյուսիսային կողմում, —չեն կուսհել, թե դրանով նրանք


փորում են իրենց շրջանի անասնապահության արմատները: գեռ  
ավելին, չեն նախատեսել, վոր նրանք այդպիսով տարվա մեծ մասը  
ջրից զրկում են իրենց լեռնաղբյուրները, վորի հետևանքով այդ  
ղբյուրները անձրևների ժամանակ կատաղի հորդում էին գեպի  
հարթավայրերը: Յեվրոպայում գեռնախնձոր տարածողները  
չեյին խմանում, թե նրանք այլուրապտուղների հետ միաժամանակ  
տարածում են նաև գեղձախտը: Այսպես, ամեն քայլափոխ մեզ  
հիշեցնում է, վոր մենք բնավ չենք իշխում բնության վրա՝ ինչ-  
պես աշխարհակալն է իշխում ոտար թողովուրդի վրա, ինչպես  
մեկը, վոր գտնվում է բնությունից դուրս, —այլ վոր մենք մեր  
միս ու արյունով ու մեր ուղեղով պատկանում ենք նրան ու նրա  
մեջ ենք դանդում, և վոր մեր ամբողջ տիրապետությունն այն է,  
վոր մենք՝ գերազանցելով մյուս բոլոր կենդանիներին՝ կարողա-  
նում ենք ճանաչել նրա որենքները և կիրառել անթերի կերպով:

Յեվ իրոք, որ—ավուր մենք ավելի ճիշտ ենք ըմբռնում նրա  
որենքները և վերահասու լինում, թե ինչ հեռավոր ու մոտավոր  
հետևանք է ունենում մեր միջամտությունը բնության սովորա-  
կան ընթացքում:

Առանձնապես մեր դարում, բնական գիտությունների մեր  
հսկայաքայլ զարգացումից հետո, մենք ավելի յենք իվիճակի գեթ  
մեր սովորական արտադրական գործողությունների հեռավոր  
բնական հետևանքները ճանաչել և դրանով սովորել տիրապետե-  
լու նրան: Յեվ վորքան ավելի յե տեղի ունենում այդ, այնքան  
ավելի պետք է մարդիկ վոջ միայն զգան, այլ և գիտակցեն միաս-  
նությունը բնության հետ, և այնքան ավելի անհնարին պետք է  
դառնա այն անիմաստ ու հակաբնական պատկերացումը վոգու և  
նյութի, մարդու և բնության, հողու և մարմնի հակադրության  
մասին, վորը հանդես յեկավ Յեվրոպայում կլասիկ հին դարի  
անկումից հետո և հանձին քրիստոնեյության՝ իր զարգացման  
բարձրագույն աստիճանին հասավ:

Սակայն, յեթե հազարավոր տարիներ են հարկավոր յեղել,  
մինչև վոր մենք սովորել ենք հաշվառել արտադրությանն ուղղ-  
ված մեր գործունեյության հեռավոր բնական հետևանքները,  
ապա այդ շատ ավելի դժվար է այս գործունեյության հեռավոր  
իտարակալական հետևանքների նկատմամբ: Մենք հիշեցինք գեռ-  
նախնձորը և նրա հետևանքով գեղձախտի տարածումը: Սակայն

353  
37





ինչ է ներկայացնում զեղծախտն այն արդեցութեան հանդեպ, վորի հետեանքով գետնախնձորը դառնում է շատ յերկրներէ բան-վորներէ սնունդը, և ժողովրդական մասսաների գոյալիճակը ցած մակարդակի յե հասնում, վորի հետեանքով Իրլանդիան 1884 թվին սովի և համաճարակի մատնվեց և գետնախնձոր կամ համար-յա միայն գետնախնձոր ուտող մի միլիոն իրլանդացիները գետնի տակ և յերկու միլիոն ել ծովից դենը շարտվեցին: Յերբ արաքները սովորեցին դռել ալիոսը, չեյին ել յերազում, թե դրանով պետք է կարևորագույն այն զենքերից մինն ստեղծեն, վորով՝ այդ ժա-մանակ դեռ բնավ չհայտարարված՝ ամերիկական բնիկները պետք է հետագայում բնաջնջվեյին աշխարհի յերեսից: Յեվ յերբ Կոլումբոսը Ամերիկան դտավ, նա չգիտեր, թե դրա շնորհիվ նա պետք է կյանքի կոչեր Յեվրոպայում վաղուց չքացած ստրկութիւնը և նեգրերի վաճառման հիմքը դներ: Այն մարդիկ, վորոնք 17—18 դարերում ջանում էյին հնարել շոգեմեքենան, չեյին կոհնում, թե պատրաստում են այն զենքը, վոր՝ ավելի քան մի ուրիշը՝ ամբողջ աշխարհի հասարակական կառուցվածքը պետք է հեղաշրջեր և, մասնավորապես Յեվրոպայում, — հարստութիւնը սակավաթիվ փոքրամասնութեան ձեռքում կենտրոնացնելով և խոշորագույն մեծամասնութիւնը սեփականագուրկ անելով — նախ պետք է սո-ցիալական ու քաղաքական գերիշխանութիւնը հանձնվեր բուր-ժուազիային և ապա բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև ստեղծվեր դասակարգային պայքար, վորը կարող է վերջանալ միայն բուրժուազիայի անկումով և դասակարգային բոլոր ներհակութիւնների վերացումով: Սակայն այս բնա-զավառում ել մենք աստիճանաբար, յերկար, հաճախ դառն-փորձի, պատմական նյութի խմբավորման ու հետազոտման ոգնութեամբ ենք կարողանում մեզ համար պարզել մեր արտադրա-կան գործունեութեան միջնորդական, հետավոր հասարակական հետեանքները, և դրանով հնարավորութիւն ստանալ այդ հե-տեանքներին ևս տիրապետելու և նրանց կարգավորելու: Սակայն այդ կարգավորումն իրագործելու համար պիտի ե պետք, քան լոկ խմացութիւնը: Դրա համար անհրաժեշտ է հիմնովին հեղա-շրջել մեր մինչև այժմ գոյութիւն ունեցող արտադրական ձևերը և, դրա հետ միասին, մեր արդի ամբողջ հասարակական կարգերը:

Բոլոր մինչ այժմյան արտադրական ձևերն ատաղազրել են

աշխատանքի անմիջական ու մոտավոր ոգտակար արդյունքը միայն ստանալու: Միանգամայն անտեսվում են հետավոր, հետա-գայում հանդես յեկող ու հետզհետե կրկնվելու և կուտակվելու շնորհիվ վճռական նշանակութիւն ստացող հետեանքները: Հոգի ակըրնական համայնական սեփականութիւնը համապատասխանել և, մի կողմից, մարդկանց զարգացման աստիճանին՝ նրանց մաքի հորիզոնը սահմանափակելով առհասարակ ամենամերձավորով և առձեռնով, — մյուս կողմից՝ կանխադրել է տրամադրելի հոգի վորոշ ավելցուկ, վորն այս նախադարյան անտեսութեան հնա-րավոր կարելի զեպքում վորոշ դեր պիտի խաղար: Յերբ հոգի այս ավելցուկն սպառվում է, քայքայվում է նաև համայնական սեփականութիւնը: Արտադրութեան բոլոր բարձր ձևերը, սա-կայն, ստեղծեցին արդարնակութեան բաժանումը վորոշ դասա-կարգերի ու դրա հետ միասին՝ ներհակութիւն իշխող ու ճնշվող դասակարգերի միջև: Դրանով սակայն իշխող դասակարգերի շահը դարձավ արտադրութեան առաջամուկ տարրը, ինչ չափով վոր այդ արտադրութիւնը չի սահմանափակվում ճնշվող դասա-կարգերի խղճուկ սպրուտստով: Ամենկատարյալ ձևով դա իրա-կանացալ Արեւմտյան Յեվրոպայում իշխող կապիտալիստական յեղանակի մեջ: Արտադրութիւնն ու փոխանակութիւնը անորի-նող ստանձին կապիտալիստները կարող են միայն իրենց գործո-ղութիւնների անմիջական շահաբեր արդյունքով մտահոգվել: Այս շահավետ արդյունքն անդամ, — ինչ չափով վոր խոսքը վերա-բերում է արտադրվող կամ փոխանակվող ապրանքի ոգտակարու-թեան, — միանգամայն հետին տեղն է դրավում: Միակ խթանը դառնում է վաճառքով ձեռք բերված շահը:

Բուրժուազիայի սոցիալական գիտութիւնը, դասական քա-ղաքականութիւնն զբաղվում է առավելապես միայն արտադրու-թեանն ու փոխանակութեանն ուղղված մարդկային գործողու-թիւնների անմիջական հասարակական կանխամտածված հե-տեանքներով: Դա լիովին համապատասխանում է այն հասարա-կակազմին, վորի տեսական արտահայտութիւնն է նա: Բանի վոր առանձին կապիտալիստները ցանկանում են արտադրել ու փոխանակել անմիջական շահի հարմար, ուստի և ամենից առաջ ու-չադրութեան կարող են առնվել միայն ամենամոտայնաձեղնական հե-



տեանքները: Յերբ առանձին գործարանատերը կամ վաճառականը ծախում է պատրաստի կամ դեռ չապրանքը միայն սովորական շահով, ապա նա զոհ է և չի մտահոգվում, թե դրանից հետո ի՞նչ կպատահի այդ ապրանքի ու դրա զնորդի հետ: Նույնը և այդ գործողութիւնների բնական հետեանքների մասին: Յերբ Կուրայի սպանացի պլանատորները հրձիգում էյին դառնիվայրերի անստաները և մոխրից օտանում պարարտանյութ, վորը կարող է արդյունաբեր սուրճի տունկերի մը սեքնդի համար բախական լինել, բնավ նրանց փուլթը չեր, թե արեւադարձային հեղեղները կըջեն անպաշտպան բուսահողերը և կթողնեն միայն լերկ քարածայուերը: Բնության, ինչպես և հասարակության նկատմամբ, արտագրության արդի ձևի որոք գլխավորապես հաշվի յե առնվում միայն առաջին շոշափելի հաջողութիւնը. և դեռ զարմանում են, վոր այս ուղղությամբ գործադրված աշխատանքների հեռավոր հետեանքները միանդամայն այլ, մեծ մասամբ սպասածի հակառակն են, վոր առաջարկե ու պահանջի ներդաշնակութիւնը փոխարկվում է իր բեւոային հակադրության, վորը հանդես է դալիս արդյունաբերական յուրաքանչյուր տասնամյակից հետո, ինչպես Գերմանիան ևս իր «սնանկությամբ» դրա մի փոքր նախերգանքն ապրեց. վոր սեփական աշխատանքի վրա հիմնված մասնավոր սեփականութիւնն անհրաժեշտաբար տանում է դեպի աշխատավորի սեփականագրկումը, այնինչ բոլոր հարստութիւնները հեռահետե կենտրոնանում են անաշխատների ձեռքում, վոր...







Ф. Энгельс

Роль труда в процессе очеловечения обезьяны

Издательство ЦККП (б) А

Партиздат 1983 Эривань







